

Բանալի բառեր՝ լոգիստիկա, նյութական հոսքերի կառավարում, լոգիստիկ շղթա, ԼԿՏՀ (լոգիստիկայի կառավարման տեղեկատվական համակարգ), լոգիստիկայի սկզբունքներ, կրթության տնտեսագիտություն, կրթության շրջադարձ մոդել, կրթության լոգիստիկա:

ՀՏԴ 001.895:338.2

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼՈԳԻՍՏԻԿԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԵՐԻՐԸ

Հասմիկ ՍԱՐԳՍՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների թեկնածու,
ՀՊՄՀ Նախադպրոցական մանկավարժության
և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ*

Համաշխարհային տնտեսագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս գոյություն չունի «**լոգիստիկա**» հասկացության մեկ ընդհանուր սահմանում: Առավել լայն տարածված են հասկացության հետևյալ մեկնաբանությունները:

1. Կառավարման հարցերով ամերիկյան խորհրդի սահմանմամբ՝ «**Լոգիստիկան** բեռների, նյութերի, կիսաֆաբրիկատների և պատրաստի ապրանքի տեղափոխման ու պահեստավորման տեխնոլոգիայի և տնտեսապես արդյունավետ գործընթացների պլանավորումը, իրականացումն ու վերահսկողությունն է, ինչպես նաև համապատասխան տեղեկատվության փոխանցումն արտադրության վայրից սպառման վայրերը՝ համաձայն սպառողների շահերի»:

2. Գնողական գործունեության կազմակերպման խնդիրների բրիտանական ինստիտուտի մոտեցմամբ «**Լոգիստիկան** մատակարարում-արտադրություն-իրացում շղթայի շրջանակներում կառավարման և կորդինացման գործընթացն է, ներառյալ՝ ներմուծողի ընտրությունը, արտադրության նյութական ապահովման կազմակերպումը, պաշարների տեղավորումը և պատրաստի ապրանքը տեղաբաշխման կամ տեղափոխման ուղիներով սպառողներին հասցնելը»:¹

3. Համբուրգի համալսարանի պրոֆեսոր Գ. Պավելլեկը տալիս է հասկացության հետևյալ մեկնաբանությունը: «**Լոգիստիկան** ձեռնարկություն մտնող, այնտեղ վերամշակվող ու այնտեղից դուրս եկող նյութական հոսքի և դրան համապատասխանող տեղեկատվական հոսքի պլանավորումն ու վերահսկողությունն է»:²

4. Գերմանացի մեկ այլ հայտնի մասնագետ Վ.Կիլիսկը գտնում է, որ «**Լոգիստիկան** նյութի և պատրաստի ապրանքի տեղաշարժման բոլոր համակարգերի համախմբումն է՝ ինչպես ձեռնարկության ներսում, այնպես էլ դրանից դուրս: Այն թույլ է տալիս կառավարել նյութական հոսքերը՝ սկսած նախապատրաստման պահից մինչև իրացումը՝ ֆիզիկական, տեղեկատվական և կազմակերպչական առումներով»:³

5. Ռուս հեղինակ Բ.Ա. Անիկին իր հետազոտություններում ընդհանրացնելով առկա մոտեցումները՝ այն բնութագրում է որպես «գիտություն՝ սկզբնաղբյուրից մինչև վերջնական սպառողը նյութական հոսքերի կառավարման մասին՝ ապրանքի տեղաշարժի և դրան վերաբերող տեղեկատվական հոսքերի հետ կապված ծախսերի նվազագույն օգտագործմամբ»:⁴

Լոգիստիկայի դիտարկված սահմանումների մի խմբում այն մեկնաբանվում է որպես տնտեսական գործունեության ուղղություն, որը հանգում է արտադրության և շրջանառության միջև նյութական հոսքերի կառավարմանը: Մյուս խումբը լոգիստիկան դիտարկում է որպես միջառարկայական գիտական ուղղություն, որն անմիջականորեն կապված է նյութական հոսքերի արդյունավետության բարձրացման նոր հնարավորությունների որոնման հետ:

Որոշ սահմանումներում ընդգծվում է լոգիստիկայի խնդիրները լուծելիս ստեղծագործական մոտեցման բարձր կարևորությունը: Ինչպես օրինակ՝ հետևյալը: այն նյութական հոսքերի կառավարման արվեստ է կամ պահանջմունքների որոշման արվեստ և գիտություն, ինչպես նաև այդ պահանջմունքների բավարարմանը ծառայող ամեն ինչի ձեռքբերում, բաշխում և պահպանում աշխատանքային վիճակում դրանց կենսագործունեության ողջ ընթացքում:⁵

Լոգիստիկայի բերված սահմանումներից հետևում է, որ այն **ավելի լայն բնագավառ է, քան մարքեթինգը**, որի հիմնական գործառնություններից շատերն անցել են լոգիստիկային: Վերջինիս հիմնավորումներից կարող է լինել որոշ ընկերություններում լոգիստիկական ենթակառուցվածքների ստեղծումը, որոնք կլանել են նախկին մարքեթինգային ենթակառուցվածքները: Ավելին, անգլիացի այնպիսի հետազոտողներ, ինչպես Մ. Կրիստոֆերը և Գ. Ուիլսոնը, գտնում են, որ լոգիստիկան արդյունավետ է ոչ միայն ընկերությունների, այլև **բնագավառային մակարդակում**: Վերջիններիս կարծիքով, **լոգիստիկային պետք է պատկանեն բնագավառի ընդհանուր տնտեսական գործընթացի վերաբերյալ որոշումները**, ներառյալ՝ ձեռնարկությունների և պահեստների տեղաբաշխումը:⁶

Լոգիստիկայի կառավարման հիմնական օբյեկտը նորարարական, ֆինանսական եւ նմանատիպ այլ հոսքերն են: Այդ իսկ պատճառով էլ լոգիստիկայում հիմնարար դերակատարում ունի հոսքային հասկացությունների գործածությունը (տես՝ գծապատկեր 1):⁷

¹ Павлюченко И.В., Логистика: краткий теоретический курс, Ульяновск: УлГТУ, 2011, 95с., с. 7.

² The realities and challenges of European logistics into the 90s, Milan, 6th European Logistics Congress. November 1988, p. 12.

³ Павлюченко И.В., նույն տեղում, էջ 7


⁴ Логистика, Учеб. пособие, Под ред. Б.А. Аникина, М.: ИНФРА-М, 1999, 327с., с. 13.

⁵ Дроздов П.А., Основы логистики, Учебное пособие, Минск, 2008, 211с., с. 10.

⁶ Логистика, Учеб. пособие, նույն տեղում, էջ 14

⁷ Стерлигова А.Н., Терминологическая структура логистики, Логистика и управление цепями поставок, 2004, №4 с. 101-109, с. 103.


Գծապատկեր 1.
Լոգիստիկայում կիրառվող հոսքերի հասկացախումբը



Լոգիստիկայի բառապաշարում «հոսք» հասկացության ներմուծումը պայմանավորում է դրա ըմբռնման հստակեցման անհրաժեշտությունը. «հոսքը ոչ թե շարժվող զանգվածն է», այլ «օբյեկտների հարակցությունը, որոնք ընկալվում են որպես մեկ ամբողջություն», կամ «**հարաբերականորեն միատարր տնտեսական միավորների հարակցությունը, որոնք տեղաշարժվում են գոյացման աղբյուրից (արտադրությունից) դեպի նպատակակետ (սպառում):**»⁸

Լոգիստիկան ներառում է մի շարք գործողություններ, որոնք կապված են լոգիստիկայի «յոթ ճիշտ»-երի⁹ հետ:՝ Տարիներ շարունակ լոգիստներն աշխատել են զարգացնել մոդելը, որը պատկերավոր ցույց կտա լոգիստիկայի համակարգում գործողությունների միջև փոխհարաբերությունները: Այն անվանվել է լոգիստիկ շղթա (տես՝ գծապատկեր 2):

Գծապատկեր 2.
Լոգիստիկ շղթան



Շղթային նայելիս առաջին հերթին ակնհայտ է դառնում, որ այն շրջանաձև է, ինչը մատնանշում է դրա տարբեր տարրերի կրկնվող բնույթը: Յուրաքանչյուր գործողություն՝ սպառողների սպասարկումը, ապրանքի ընտրությունը, քանակականացումն ու գնումները, ինչպես նաև գույքի կառավարումը կախված է և իր հերթին ներգործում է մյուս գործողությունների վրա: Իսկ շղթայի կենտրոնում գտնվող գործողությունները ներկայացնում են կառավարմանը աջակցող գործառնությունները, որոնք տեղեկատվություն են տալիս և ազդում են լոգիստիկ շղթայի այլ տարրերի վրա:¹⁰

Լոգիստիկայի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է պահպանել մի շարք հիմնական սկզբունքներ:

1. **Չանակարգային մոտեցման սկզբունք:** Հետազոտության օբյեկտներին որպես համակարգ մոտենալը լոգիստիկայի կարևոր առանձնահատկություններից է: Առավելագույն արդյունքի կարելի է հասնել միայն այն դեպքում, երբ տվյալ

⁸Стаханов В.Н., Украинцев В.Б., Теоретические основа логистики, Ростов-на-Дону: Феникс, 2001, с. 160, с. 57.

⁹Gleissner, H.: Femerling J.C. The Principles of Logistics, 2013 XXI, 311pp., p. 5.

¹⁰Ճիշտ ապրանքը ճիշտ որակով ճիշտ քանակությամբ ճիշտ վայրում ճիշտ ժամանակին ճիշտ արժեքով և ճիշտ սպառողին:

¹⁰The Logistics Handbook: A Practical Guide for the Supply Chain Management of Health Commodities. Usaid deliver project, 2011, pp. 174, p. 4-5.

բնագավառը օպտիմալացվում է ամբողջությամբ՝ հումքի սկզբնաղբյուրից մինչև վերջնական սպառողը, ոչ թե միայն առանձին ձեռնարկության կամ ենթաբաժնի շրջանակներում: Ընդ որում, լոգիստիկ շղթայի բոլոր օղակները պետք է աշխատեն որպես միասնական համաձայնեցված մեխանիզմ: Այդ իսկ պատճառով էլ դրանք պետք է դիտարկել որպես ամբողջական համակարգ, որպեսզի համաձայնեցվեն դրա առանձին տարրերի տնտեսական շահերը, տեխնիկական հարցերը, տեխնոլոգիական գործընթացները և այլն:

2. **Բացարձակ ծախսերի սկզբունք:** Լոգիստիկայի հիմնական խնդիրներից մեկը ընդհանուր լոգիստիկ ծախսերը նվազագույնի հասցնելն է լոգիստիկ շղթայի ողջ երկարությամբ՝ հումքի սկզբնաղբյուրից մինչև վերջնական սպառողը: Այս խնդրի արդյունավետ լուծման անհրաժեշտ պայման է լոգիստիկ ծախսերի ճշգրիտ հաշվարկման հնարավորությունը, սակայն դա հնարավոր է միայն այն պարագայում, երբ արտադրության ծախսերի և շրջանառության հաշվարկման համակարգը թույլ է տալիս առանձնացնել լոգիստիկայի ծախսերը: Այդ պատճառով անհրաժեշտ է առանձնացնել և վերլուծել լոգիստիկ շրջանառության իրացման ծախսերը, որոշել ամենանշանակալի ծախսերը, բացահայտել դրանց փոխպայմանավորվածությունը և այլն:

3. **Գլոբալ օպտիմալացման սկզբունք:** Լոգիստիկ համակարգի կառուցվածքի կամ կառավարման օպտիմալացման ընթացքում անհրաժեշտ է համաձայնեցնել համակարգի առանձին տարրերի գործունեության մասնավոր նպատակները համընդհանուր ամենարդյունավետի ձեռք բերման համար:

4. **Լոգիստիկ կորդինացիայի և ինտեգրման սկզբունք:** Լոգիստիկ կառավարման ընթացքում անհրաժեշտ է նպատակային գործառնայի իրականացման ժամանակ հոսքերի բոլոր տեսակների կառավարմանը լոգիստիկ համակարգի կամ շղթայի բոլոր օղակների համաձայնեցված, փոխներդաստիարակված մասնակցության ձեռք բերում:

5. **Փոխզիջումների տեսության օգտագործումը ծախսերի վերաբաշխման համար:** Փոխզիջում հասկացությամբ նշանակվում է լոգիստիկ գործընթացի մասնակիցների տնտեսական շահերի համաձայնեցումը: Լոգիստիկ կառավարման համակարգի ձևավորման լոգիստիկ մոտեցման կայացման սկզբում կիրառվում էր նվազագույն ընդհանուր ծախսերի չափանիշը: Այն մի կողմից որոշումների կայացման նոր հնարավորություններ էր ստեղծում, սակայն միաժամանակ որոշակիորեն սահմանափակում էր ստացվող որոշումների արդյունավետությունը: Այդ պատճառով հետագայում եկավ այն գիտակցումը, որ չափանիշ պետք է լինի համակարգի բոլոր օղակների առավելագույն եկամուտը լոգիստիկ շրջանառությունից: Այսպիսով, լոգիստիկ համակարգի օղակներից մեկում եկամտի նվազումը (ծախսերի ավելացումը) թույլատրելի և անհրաժեշտ է, եթե այն կհանգեցնի ամբողջական համակարգի եկամտի ավելացման (ծախսերի նվազման):

6. **Լոգիստիկ սպասարկման զարգացման սկզբունք:** Ապրանքի որակի բարձրացման կամ նոր ապրանքի թողարկման համեմատ գոյություն ունի ձեռնարկության մրցունակության բարձրացման նվազ ծախսատար ճանապարհ, մասնավորապես՝ լոգիստիկ ծառայության ժամանակակից մակարդակի ձեռք բերում և դրա զարգացում (ճկունության, հուսալիության և բարձր որակի ապահովում և այլն):

7. **Ենթահամակարգերի անհրաժեշտ համալիրի մշակման սկզբունք,** որոնք ապահովում են լոգիստիկ կառավարման գործընթացը (տեխնիկական, կազմակերպչական, իրավական, կադրային, բնապահպանական և այլն):

8. **TQM՝ որակի համընդհանուր կառավարման սկզբունք:** Լոգիստիկ համակարգի յուրաքանչյուր տարրի աշխատանքի հուսալի գործունեության և բարձր որակի ապահովումն է՝ վերջնական սպառողներին ապրանքների ու ծառայությունների ընդհանուր որակի ապահովման նպատակով:

9. **Լոգիստիկ համակարգում բոլոր գործառնայիների և տեխնոլոգիական որոշումների հումանիզացիայի սկզբունք:** Բոլոր որոշումները պետք է համապատասխանեն շրջակա միջավայրի պահպանության, անձնակազմի աշխատանքի դյուրագիտական, սոցիալական, էթիկական պահանջներին: Այսպես օրինակ, լոգիստիկ համակարգի կարևորագույն տարրերից մեկը կարգերն են, որոնք ընդունակ են պատասխանատվության անհրաժեշտ չափով կատարել իրենց գործառնայիները: Համակարգի կառավարմանը կարգապահ, որակյալ անձնակազմ ներգրավելու համար անհրաժեշտ են աշխատանքի ժամանակակից պայմաններ, աշխատանքային աճի հեռանկարներ, նման աշխատանքի հեղինակության բարձրացում և այլն:

10. **Կայունության և հարմարակցմանության (ադապտիվության) սկզբունք:** Ձեռնարկությունների արտաքին միջավայրը բերուցվում է անորոշության բարձր մակարդակով, ապրանքների և ծառայությունների շուկայական պահանջարկի, հումքի, տեղափոխման ծառայությունների գների կտրուկ, որակական և քանակական բնութագրերի տատանումներով, մատակարարման և գնումների պայմանների փոփոխությամբ և այլն: Այս պայմաններում լոգիստիկ համակարգը պետք է կարողանա վերականգնվել՝ փոխելով նպատակները, ցուցանիշները, օպտիմալացման չափանիշները, գործունեության ծրագիրը, այսինքն՝ հարմարվել միջավայրի նոր պայմաններին: Այսինքն՝ դա շուկայում կայուն դիրքի էական գործոններից է հանդիսանում:¹¹

Այսպիսով, լոգիստիկայի ընդհանուր բնութագրիչների դիտարկումը թույլ է տալիս արձանագրել, որ այն ավելի լայն հասկացություն է, քան սկզբնական շրջանում ընդունված էր համարել: Եթե նեղ իմաստով այն դիտարկվում է որպես պարզապես արտադրության և շրջանառության միջև նյութական հոսքերի կառավարման գործընթաց, ապա ավելի ժամանակակից մոտեցումներում առաջարկվում է լոգիստիկային հանձնել բնագավառի ընդհանուր տնտեսական գործընթացի վերաբերյալ որոշումների կայացումը: Այսօր արդեն կան առողջապահության ոլորտում լոգիստիկայի հնարավորությունների ներդրման փորձեր:¹² Մինչդեռ կրթության բնագավառում լոգիստիկայի սկզբունքների և մոտեցումների կիրառման հիմնախնդիրը զարմանալիորեն մինչ օրս չի դիտարկվել: Ստորև փորձենք հիմնավորել կրթության բնագավառի լոգիստիկ կառավարման հեռանկարները:

Հայտնի է, որ կրթությունը որպես տնտեսագիտական ուսումնասիրության բնագավառ բավական ուշ է առանձնացել՝ 20-րդ դարի կեսերին: Սկզբնական շրջանում հետազոտողներին հետաքրքրում էր կրթության և երկրի տնտեսական աճի փոխկապակցվածությունը: Քիչ ավելի ուշ միայն կրթությունը սկսեց դիտարկվել որպես ներդրումային ոլորտ, որը որոշակիորեն հետադարձում է անհատների ողջ կյանքի ընթացքում: Իսկ 90-ական թվականների վերջերին կրթությունը դարձավ տնտեսության ճյուղերից մեկը, և հետազոտողները սկսեցին վերլուծել կրթության ռեսուրսներն ու նրա արտադրողական գործառնայի:¹³

Կրթության ոլորտի տնտեսական մոդելը դա գոյություն ունեցող փոփոխականների միջև վերացականորեն կառուցված փոխկապակցվածությունն է, որը թույլ է տալիս կանխատեսել գործունեության արդյունքները: Լոգիստիկայի հետ կրթության բնագավառի հարաբերակցման առավել ակնառու օրինակ կարող է դառնալ կրթության սխեմատիկ շրջադարձ մոդելը (տես՝ գծապատկեր 3):¹⁴


¹¹Павлюченко И.В., Логистика: краткий теоретический курс, Ульяновск: УлГТУ, 2011, 95с., с. 20-22.

¹²The Logistics Handbook: A Practical Guide for the Supply Chain Management of Health Commodities, USAID DELIVER PROJECT, 2011, pp. 174.

¹³Анисовец Т.А., Экономика образования и образовательного учреждения, Учебно-методическое пособие, Отдел оперативной полиграфии НИУ ВШЭ, СПб 2012, 180с., с. 6.

¹⁴Анисовец Т.А., там же, с. 12.

Փճապատկեր 3.
Կրթության շրջադարձային տնտեսական մոդելը



Եթե կրթության տնտեսագիտական մոդելը համեմատենք վերևում տրված լոգիստիկ շղթայի հետ, ապա ակնհայտ է դառնում, որ դրանք լիարժեքորեն համադրելի են: Կրթությունն ունի ապրանքի ընտրության օղակը, այն յուրահատկությամբ, որ կրթության տնտեսագիտության մեջ այդպիսի ապրանք հանդես է գալիս «կրթական ծառայությունը», որը առարկայական չէ, անբաժանելի է արտադրողից եւ արտադրվում ու սպառվում է միաժամանակ, իսկ դրա արժեքը մշտապես փոփոխվում է: Գնումների օղակի առումով կրթության բնագավառում գործ ունենք կեղծ շուկայի հետ (տնտեսական ռեսուրսներ), քանի որ այն չի ենթադրում արտադրվող բարիքի ուղղակի գնում: Գույքի կառավարումը, պահեստավորումը և բաշխումը կապված է կրթական հաստատությունների շենքերի և դրանցում առկա ռեսուրսների հետ, որպես սպառողներ հանդես են գալիս ծնողներն ու սովորողները: Ինչ վերաբերում է լոգիստիկ շղթայի կենտրոնում տեղակայված օղակներին, դրանք բնորոշ են ցանկացած բնույթի տնտեսական համակարգի, այդ թվում և կրթությանը: Խոսքը մասնավորապես մոնիթորինգի, աշխատակազմի և կազմակերպման, ֆինանսավորման, վերահսկողության և գնահատման շարունակական գործընթացների մասին է, որոնք հատկապես կրթության համակարգում, հաշվի առնելով դրա բազմաշերտությունը և բազմամակարդակ կառավարումը, առավել բարդ է իրականացնել:

Մյուս կողմից, կրթության համակարգում առկա են լոգիստիկայի բոլոր հոսքային ուղղությունները՝ նյութական, տեղեկատվական, ֆինանսական և ծառայությունների:

Ի վերջո, կրթության բնագավառի արդյունավետ կառավարման համար բարձր կիրառելիություն կարող են ունենալ լոգիստիկայի վերևում բերված համակարգային մոտեցման, բացարձակ ծախսերի, գլոբալ օպտիմալացման, կորոզիանցիայի և ինտեգրման, փոխգիշումների տեսության, սպասարկման զարգացման, ենթահամակարգերի անհրաժեշտ համալիրի մշակման, որակի համընդհանուր կառավարման, հունանիզացիայի, կայունության և հարմարվողականության սկզբունքները:

Այսպես, ամփոփելով, կարող ենք արձանագրել, որ կրթության կառավարման բնագավառում լոգիստիկայի՝ որպես գիտության հնարավորությունների և ձեռքբերումների ներդրումը կարող է մեծ արդյունավետություն հաղորդել կրթության սոցիալ-տնտեսական զարգացման մեխանիզմների մշակմանը: Ինչպես նաև մեր կողմից առաջարկվում է շրջանառության մեջ դնել «կրթության լոգիստիկա» հասկացությունը, որի համար որպես աշխատանքային սահմանում առաջարկվում է հետևյալը. «Կրթության լոգիստիկան կրթական ծառայությունների ստեղծման, կրթության հետ կապված նյութական, տեխնիկական, ֆինանսական և ծառայողական հոսքերի կառավարման և դրանքսպառողներին հասցնելու, ինչպես նաև արդյունավետ տնտեսական պլանավորման և վերահսկողության կազմակերպման բնագավառ է»:

Ներկայացվել է 24.07.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.